# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀ ՔԿ ՀԲՄԽԾՁԲ-ՆԽ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

17 հունիսի 2022թ.
ժամը՝ 11:00

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Աղյան, Ա. Ազարյան, Վ. Մկրտչյան, Վ. Անդրեասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

***1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ***

| *Չափաբաժնի համարը* | *Չափաբաժնի անվանումը* | *Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| 1 | ՀՀ քննչական կոմիտեի Ստեփանավանի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում | 400 000 |
| 2 | ՀՀ քննչական կոմիտեի Աչափնյակ և Դավթաշեն քննչական բաժնի շենքի հիմնա-նորոգման համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում | 800 000 |

***2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները***

«ՀՀ ՔԿ ՀԲՄԽԾՁԲ-ՆԽ-22/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| *Հ/հ* | *Մասնակիցների անվանումները* | *Հասցեներ* |
|---|---|---|
| 1 | Ղարաքիլիսա ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 06929659, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 63/21, հեռ. 095-92-92-90, lhakhinyan@gmail.com |
| 2 | ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ | ՀՎՀՀ՝ 00149653, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., 32շ., բն. 45, հեռ. 098-12-76-77, 4davtyan4.44@gmail.com |
| 3 | ԱՁ "Անահիտ Գևորգյան" | ՀՎՀՀ՝ 57348351, ք. Գյումրի, Մուսայելյանի փ. 49/2, հեռ. 043-52-25-81, Artprojectarm@yahoo.com |
| 4 | ԱՐԽԻ ԹՈՒԼՍ ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 04234306, Արարատի մարզ, գ. Ոստան, Երևանյան 13, հեռ. 096-59-50-10, architools@nail.ru |

***3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

3.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ***

4.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը արձանագրեց, որ ներկայացված հայտերում /հայտում առկա փաստաթղթերում/ կան անհամապատասխանություններ, մասնավորապես.

4.1.1 **«Ղարաքիլիսա» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում

- Հավելված 1.2-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) 1.1.6 կետում գրանցման պետությունը պետք է նշվի ամբողջությամբ՝ Հայաստանի Հանրապետություն: 1.3.3 կետում բացակայում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

**4.1.2 «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում

- Հավելված 1.2-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) 1.3.2 կետում էջերի քանակը ճիշտ չէ նշված: 4.3.3 և 4.4.3 կետերը ենթակա են շտկման /Վարչատարածքային միավորը՝ Երևան/:
- Բացակայում են նախկինում մատուցված նմանատիպ ծառայությունների պայմանագիրը /կամ պայմանագրերը/, Հավելված №3 /աշխատանքային ռեսուրսներ/ և մասնագետների դիպլոմ, տեղեկանք համաձայնության մասին:

**4.1.3 «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում

- Հավելված 1.2-ում (այսուհետ՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) 3.5.3 և 3.6.3 կետերը ենթակա են շտկման /Վարչատարածքային միավորը՝ Արարատի մարզ/: 3.9.2. կետը նշված չէ:
- Բացակայում են նախկինում մատուցված նմանատիպ ծառայությունների պայմանագիրը /կամ պայմանագրերը/, մասնագետների դիպլոմ, տեղեկանք համաձայնության մասին:
- Հրավերով պահանջվում էր մասնագիտությամբ ճարտարագետ-շինարար, սակայն Հավելված №3-ով /աշխատանքային ռեսուրսներ/ ներկայացված մասնագետների որակավորումը նշված է ինժեներ շինարար և ինժեներ էներգետիկ:

**4.1.4 «Անահիտ Գևորգյան» Ա/Ձ**-ի կողմից ներկայացված հայտում

- Հրավերով պահանջվում էր մասնագիտությամբ ճարտարագետ-շինարար, սակայն Հավելված №3-ով /աշխատանքային ռեսուրսներ/ ներկայացված մասնագետներից Հրանտ Մարգարի Կարապետյանի որակավորումը նշված է ինժեներ-կոնստրուկտոր և Միքայել Բաղդասարի Շարոյանի որակավորումը նշված է ինժեներ-էներգետիկ:
- Բացակայում է Միքայել Բաղդասարի Շարոյանի կողմից ստորագրված համաձայնագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **«ՀՀ ՔԿ ՀԲՄԽԾՁԲ-Նխ-22/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերի 2.4 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 17.06.2022թ.-ին նիստը կասեցնել՝ ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

***5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը***

| Չ/Հ | Անվանում | Գնման հայտով սահմանած գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | «Ղարաքիլիսա» ՍՊԸ* | «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ* | «Անահիտ Գևորգյան» ԱՁ* | «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ* |
| 1 | ՀՀ քննչական կոմիտեի Ստեփանավանի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում | 400 000 | 1 420 000 | 2 400 000 | 2 800 000 | 4 000 000 |
| 2 | ՀՀ քննչական կոմիտեի Աշոցքի և Դավթաշենի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում | 800 000 | | 2 400 000 | 3 700 000 | 4 000 000 |

* **ԱԱՀ վճարող չեն**

**6. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին**

Հայտերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

**7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին**

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 24.06.2022թ. ժամը 11:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**8. 24.06.2022թ. ժամը 11:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ**

Նիստը վերսկսվեց 24.06.2022թ. ժամը 11:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են շտկման ենթակա փաստաթղթերը:

**9. Հանձնաժողովը որոշեց՝**

9.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և, որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, նիստը կասեցնել, էլեկտրոնային ձևով ծանուցել բավարար գնահատված մասնակիցներին 28.06.2022թ. ժամը 15:00-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրելու մասին ՀՀ քննչական կոմիտեի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) — Գ. Արշակյան

***անդամներ՝***

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Դ. Աղյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Ա. Ազարյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Վ. Մկրտչյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Վ. Անդրեասյան
5.Գնման Պատասխանատու/ հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀՄ) — Ն. Բաբայան